ԱՐՄԷՆԻԱ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՑԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՅԼԻՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամէն տեղի համար ուր այս լրագրի մուտքը արգիլուած չէ, ամբողջ 14րդ չրջանի (98 օգոստ.—99 մայիս) բաժնորդագինն է 20 Ֆր. կանխիկ։ Կարելի է նաև բաժնորդագրուիլ քանի ամսի համար որ ուզուի, ամէն մէկ ամսականը 2½ Ֆր. հաշուելով և 1899 մայիս ամսէն անդին չանցնելու պայմանով։

Նամակ և ծրարպէտք է դրկել հետեւեալ հասցէով. M. PORTOUKALIAN, Rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France)։

ԺԴ ՏԱՐԻ ԹԻՒ 8

1898 ՕԳՈՍՏՈՍ 27

1898 ՕԳՈՍՏՈՍ 15 (Հ. Տ.)

ՏՂԵԱՔ

Կը հրատարակուի Ջ. և Շաբ. օրեր

ԳՆԱՀԱՏՈՒԹԻՒՆ

Թղթակցութիւնը, եթէ հարկ համարի, հաժառօտելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն դրկուած գրութիւնները։ Չոր առուր չէ վերադարձունէլ չհրատարակուած ձեռագիրներ։

Յանուցումներ կընդունուին Հայերէն և Ֆրանսերէն լեզուով Յանուցման 1 միլիմէթրը 1 սանտիմ արժէ։ 1 գլխագիրը 2 սանտիմ։

Les annonces, en français et en arménien, sont reçues aux bureaux de la Rédaction : Rue Fortia, 7.

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ "ԱՐՄԷՆԻԱ„Ի ԺԴ ՇՐՋԱՆԻՆ

(1898 *ՕԳՈՍՏՈՍ*—99 *ՄԱՅԻՍ*)

Արմենիայի բաժնորդագրութեան պայմանները նոյնը կը մնան։ Թէ՛ օգոստոսէն, թէ՛ սեպտեմբերէն և թէ՛ հոկտեմբերէն սկսելով բաժնորդ եղողները հատուցապահս կը պարտին վճարել 20 ֆրանք բաժնորդագին մինչև 14րդ չրջանի վերջը (1899 մայիսի վերջ)։ Իսկ անոնք որ ամբողջ 14րդ չրջանին (1898 օգոստ. — 99 մայիս) համար չեն բաժնորդագրուիր, կարող են ամսական 2½ ֆր.ի հաշուով բաժնորդագրուիլ քանի ամսի համար որ ուզեն, 1899ի մայիս ամսէն անդին չանցնելու պայմանով։

ԱՐՄԷՆԻԱՅԻ ՕԺԱՆԴԱԿՆԵՐՆ ի-րենց համար առացած մէկ օրինակ Արմենիայէն դուս՝ որի բաժնորդագինը 20 ֆր. է, ուրիշների համար քանի օրինակ Արմենիա որ ուզեն, իրենց լրագրի ծրարին մէջ դրուած կը ղրկուի առանց ուրիշ հասցէ վրան գրելու և անոնց բաժնորդագինը ամսական մէկ ֆրանք միայն հաշուելով։ Յանկացողներին կը դրկուի Արմենիայի Օժանդակութեան կանոնագիրը։

Որովհետև մենք մեր թերթը մեր բաժնորդների թիւին համեմատութեամբ կը տպենք և ո՛չ շատ աւելի, օգոստոսի սկզբէն Արմենիա ունենալ ուզողները պէտք է մուծման բաժնորդագրութիւնը, կամ նոյնիսկ դրկելով բաժնորդագինը։

Անոնք որ 14րդ չրջանի ամբողջ բաժնորդագրին 20 ֆրանքը կը հասցունեն մեզ, ամենէն ուշը, գոնէ առաջիկայ օգոստոս ամսի մինչև վերջը, ձրիապէս կը ստանան նաև 1 հատ մեր ծախու հանած ԽՆԱՅՈՂՍԿԱՆ ԳԱՆՁԱՆՈՒԱԿՆ։ Օգոստոսն անցնելէ յետոյ, ա՛լ կը դադրի այդ պայմանն։ Անոնք որ կուզեն որ արձանագրուելով (recommandé—registered) ղրկուի գանձանակը, պէտք է որ 20 ֆրն հետ մէկտեղ 25 սանթիմ ալ ղրկեն արձանագրութեան ծախքը։

Յարակից չունինք որ մեր գաղափարակիցներ կը փութան այժմէն իրենց կանչեր կրկնապատկել Արմենիան տարածելու համար օր աւելի ընդարձակ այժերով կարենանք շաբունակել 14րդ տարեշրջանը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայ վարժարանների գրաւումը ռուս կառավարութեան։ — Բաղդի մէջ եղած բարբարոսութիւններուն առթիւ։ — Վանի մէջ երկու Հայի կախաղանի դատապարտութիւնը։ — Հարստահարութիւններ ի Թիւրքաստան։ — Թիւրքիան և յուրեր. — Պարսկաստանի նոր առաջնորդները։ — Խռովութիւն Պարսկաստանի մէջ։ — Նոր հրատարակութիւններ։ — Վիլհելմ Բ ի ճանապորդութիւնը. — Սպանիա եւ Միացեալ-Նահանգներ. — Արտասահմանի լուրեր։ — Յանուցումներ. — Բանասիրական (Հայրիկը)։

ՀԱՑ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԻ ԳՐԱՒՈՒՄԸ ՌՈՒՍ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆԷՆ

Արեւելքի այս չրջանի առաջին թերով արդէն հրատարակած էինք որ ռուս կառավարութիւնը Թիֆլիսի նահանգի հայ վարժարանները գրաւած վերջացուցած և այժմ ալ սկսած է Թիֆլիս քաղաքի հայ վարժարանները գրաւել։

Ռուսիոի հայութեան մեծ հարուած տուող այդ գործ խստութեամբ յառաջ կը տանի կառավարութիւնը, գրաւելով հայ ծխական վարժարաններն ինչպէս նաև վանճանած Հայ հարուստներին Հայ ազգի համար կտակով թողած վարժարանները, իրենց չէնքերով, կահ կարասիներով և իրենց յատկացուած կալուածներով մէկտեղ։ Այսպէս Մոսկուացի Հարուստ Ն նանովի կը տակովԹիֆլիսի մէջ բացուած Ժողջան եան օրիորդական ընդարձակ վարժարանի չէնքը, իր մէջ գտնուած բո-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՑԲԻԿԸ

Այսօր կը խրկեմ Տիար Mc Lirathի 72րդ նամակի թարգմանութիւնը, ի հարկէ գուբս ձգելով այն մասերը՝ որոնք Հայոց հետ համարեա յարաբերութիւն չունէին։ Տիար Mc Lirath նշանաւոր գրող մ'է, որի վերոյիշեալ նամակը քաղաքիս Inter Ocean օրաթերթի յուլիս 12ի չաբաթաթերթին մէջ հրատարակուած է և որի թարգմանութիւնը կը փափաքիմ տեսնել Արմենիայի մէջ ՀԱՑԲԻԿԸ վերնագրին տակ։

24 յուլիս 1898 — Յ. Ագրիպպաս Զիլքակօ

***

լոր գոյքերը և Անանովի կտակած ահագին քարվանսարայն ու դրամական կարողութիւնը գրաւեր է այս օրեր ռուս կառավարութիւնը։ Հիմա այդ քարվանսարայի կառավարութիւնը յանձնուած է Թիֆլիսի քաղաքային վարժարանների ռուս տեսչին։

Պէտք է լաւ ուշադրութիւն ընել յօդուածիս վերնագրին. ռուս կառավարութիւնն ոչ թէ դպրոցական ծրագիր (programme) մը կը ներկայացունէ հայ դպրոցների վարչութեան, անոր համակերպիլ առաջարկելով հայ դպրոցներին մէջ. այդպիսի ձեռնարկ մը արդարացունելու համար՝ թէր և դէմ փաստեր կրնային ներկայանալ։ Այլ նա չմոլորեր հայերին իրենց ազգային վարժարանները ունենալ և ոչ թէ միայն կը փակէ հայ վարժարանները, այլ և կը գրաւէ հայերին իրենց դրամով բացած վարժարանները, անոնց չէնքերով, գոյքերով և իրենց յատկացուած դրամական հատոյքներովը մէկտեղ։ Ռուս կառավարութիւնը ոչ միայն կարդիլէ հայերին իրենց ազգային լեզուն ուսուցանել և պարզացունելու համար իրենց յատուկ ազգային վարժարաններ ունենալը, այլև այս ազգատ, խեղճ ազգի ձեռքէն կը խլէ, կը գրաւէ անոր 5 միլիոն րուբլիէն աւելի տարեկան հատոյքները։

Եւ այս ընդդէմ մահմէտական թիւրք կառավարութիւնը չէ՝ որմէ հալածանքներ տեսնելու վարժուած է աչքերնիս և որ սակայն իր հայակից քաղաքականութեան մէջ այս աստիճան յառաջ գնացած չէ դեռ հայ ազգային

կրթութեան հոգին սպաննելու մասին. այս ընդդէմ Արեւելքի քրիստոնեաների տիտղոսատէր (attitré) պաշտպան ռուս կառավարութիւնն է որի վրայ յոյսեր կը տածենք մեր ազատութեան և պաշտպանութեան համար, որի հըսկայաքայլ յառաջացման ճանբայ բացած ենք Հայաստանի մէջ, վտանգելով մեր կեանք, Պարսիկներին ու Թիւրքերին հետ թշնամացած՝ վրայ տալով մեր հարստութիւնները ու ձեռք բերած վարչական բարձր դիրքեր, բնակիչ դարձնելով մեր մելիքութիւնները ուխտաւորութիւններ, մեր ազգայինիշխանութեան այդ վերջին ճեպագրդռները, և մեր դիակներովհարթելով ռուս ղօրքերի յառաջխաղացման առջև բացուած անդունդները։

Եւ մեր կրած այս բոլոր փորձանքներին, իրեն մատուցած անձնուիրական ծառայութիւններին փոխարէն, ահա կը վարձատրէ մեզ ռուս կառավարութիւնը, մեր ազգային վարժարանները գրաւելով, խեղճ Հայ ժողովրդին կոպէկ կոպէկ հաւաքելով դոյացուցած դպրոցական հատոյքները ձեռքէն առնելով, հայ բարերարներին իրենց ազգային վարժարանների համար կտակած ահագին գումարներն ու կալուածները Հայի ձեռքէն խլելով և մեր ապագայ յոյսն եղող դպրոցական սերունդը այժմէն բոլորովին ռուսացունել աշխատելով, ինչ որ մինչ այս կառավարութիւնը 500 տարիէ ի վեր դեռ չէր համարձակած ընել։ Եթէ կատարեալ բարերարները

Արարատի շուրջին ներքեւ։ — Mc Lirath վաղեմի էջմիածնում կը ճաշէ կրօնաւորների հետ. — Ճոխ ճաշ մը կըլնի։ — Պատկառելի կաթողիկոսին կըներդնուի սրտագին բարի գալուստով մը։ — Հայոց եկեղեցւի Պատրիարքը կը քննադատէ այն հարստահարութիւնները որոնց ենթակայ է իր ժողովուրդ։

Հ. Տարվին Մքլրադհիյ գրուած
Թիւ նամակի 72

Յատուկ թղթակից «Ինդըր Օշըն»ի

Դիվիկան (Ռուսիա), 11 մայիս

Անբացատրելի հրապուրանք մը կայ այն բոլոր կրօնային նուիրական օրէնքներին մէջ, որոնց նուիրուած անդամները ամուրի և առանձնացեալ կապրին և հագուստով, սովորութիւններով ու հաստատուն օրէնքներով ուխտած են աշխարհային անցդարձի հաճոյքներին չմասնակցիլ։ Կաթոլիկոսը, եպիսկոպոսների սինոդը և էջմիածնի վանականները բացառութիւն մը չեն և ասիական հառմոմ կը տեսնուին չատ հետաքրքրական հանդիսաւորութիւններ և խորհրդաւոր ծիսարան (մաշտոց) մը՝ որ կրնայ գոհացընել ամենադժուարահաճները։

Այն կողմնական ծառայութիւններին վրայ զետեղուած են վանական չէնքերը։ Յերեկի արևը և երեկոյին լուսնի ժայռ լորը մի տպաւորիչ տեսարան կը ներկայացունեն երբ այդ կրօնաւորները կը քալեն հոս և հոն, իրենց սև զգեստ անմիջապես աչքի կը զարնէ սպիտականերկ պատերի դիմացը։ Կաթոլիկ կրօնականների թխագոյն հագուստը, իրենց մէջքի հանգուցաւոր պարանը, գոմէշի մորթէ տրեխները և կլոր, մաքուր և չատ անգամ զուարթ երեսնին կը ներկայացունեն գեղեցիկ պատկեր մը, բաղդատելով Հայոց կրօնաւորներուն հետ։ Սև աստիճ ձոխ չէջազգեստներ հագած են էջմիածնում բոլոր եկեղեցականները. կոնաձև

կարենային իրենց գերեզմաններէ դուրս ելնել այսօր, ի՞նչ պիտի ըսէին ռուս կառավարութեան, որ փոքր ի շատէ քաղաքակրթ ամէն երկիրներու մէջ ալ նուիրական համարուած կը տակները, մեռնողի վերջին խօսքը բռնաբարել ելած է։

Եւ ինչո՞ւ համար այս ամէնը։

Գուցէ անոր համար որ Հայերն իրենց ազգութեան և եկեղեցիին յարած ձեալով ցոյց կուտան թէ բարոյապէս բարձր և իրենց արժանապատուութիւն ճանչցող ժողովուրդ մ՚են, որոնք գիւրաւ չեն համոզուիր իր երբեմն առաջարկած եկեղեցափոխութեան և չեն նմանիր այն նեստորական Ասորիներու որոնք բարոյապէս այնչափ ինկած են որ իրենց ազգային կրօնքը իրենց չափիկի պէս կրնան յաճախ փոփոխել, այսօր բողոքական կը դառնան, վաղը կաթոլիկ, միւս օր ռուսադաւան, յետոյ առէք առաջ ալ, ո՛չ պաշտօնապէս այլ խաչագողութեան համար, վարժուած էին ռուսադաւան ներկայանալ Ռուսիոյ քաղաքներին մէջ և միամիտ ռուս գիւղացիներէն փող ժողվել Երուսաղէմի անունով։

Ռուս կառավարութիւնը պէտք ալ չէ տեսած այժմ սպասելու որ դոնէ Թիւրքահայաստանն ալ մեծ մասով իր ձեռք անցնի և յետոյ սկսի Հայ ազգը ռուսացնելու գործը. այլ այժմէն իսկ առաջին մեծ քայլն առած է, չնայելով որ ատով կտոր կտոր կը ճեղքէ և կարիւնէ ամէն Հայի սիրտ ու աղ գանուին։ Հաւանօրէն Թիւրք կառավարութեան վերջերս ունեցած յիմարական վարմունքը տուած է այս համարձակութիւն Ռուսիոյ որ կը խորհի թէ Թիւրքահայաստանի սոսկալի կոտորածներէն յետոյ, ինչ որ ալ լինի, ա՛լ Ռուսիոյ լուծը թեթև կը համարին Հայեր և իբրև աղատարարի կը դիմեն իր գիրկը։

Բայց Ռուսիա որ պէտք է լաւ ուսումնասիրած լինէր Արեւելքի ժողովուրդներուն վիճակը և անոնց զգայուսները, պէտք չէր որ մի այսպիսի խոշոր սխալ գործէր, նոյն իսկ Հայերի այս տագնապալի և ծանրապէս վնասուած վիճակին մէջ։

Եթէ Թիւրքը մեր ազգայիններուն

գլխարկ մը սև, վտտած մեռաքսէ կը ծածկէ իրենց գլուխը և կը տարածուի մինչև յօնքերը, և ծածկելով ականջները կը հասնի մինչև կռնակին կէսը. պատմուճանի թևերը երկայն և լայն են և կը ծածկեն ձեռքերը։ Իրենց կօշիկներ սև են։ Երեսին, ինչպէս իւրաքանչիւր ջերմեռանդի երեսը, բոլորուած է թանձր փայլուն սև մազերով և մօրուքով մը լեցուած, որ միայն տարիներէ ծանրութեան ներքև կսպիտակնայ. խաղաղութեան համար մեղմամղձային զգեստով հագուած մարդոյն միակ մխիթարանքն են ճերմակ այտերը և դունատ դէմքի երևոյթները։

Հայր սուրբերից երեսուն, և եղած է երբեմն մինչև 50 հատ, ներկայ են ընթրեմ, ուր կան և 300 ուսանողներ որոնք միևնոյն զգեստով հագուած են, բայց նոյնպիսի գլխարկ և մօրուք չունին։ Աղօթքի և ճաշի ժամերը որոշուած ըլլալով, աշակերտներն ու վարդապետները հանդիսաւոր կարգադրութեամբ մը իրար կուգան։ Շատ քիչ անգամ կրնայ կին մը կամ թղթակից մը վանքի ճաշարանին մէջ

մարմինները ապաննեց, Ռուսն ալ ելեր է հիմա մեր մէկուկէս միլիոն հայ եղբայրների հոգիները ապաննել։

Հայերն երբէք չեն կրնար հաշտ աչքով նայիլ իրենց ազգային և կրօնական զգացումները վիրաւորողներին. միևնոյնն է թէ այդ վէրք տուողը քրիստոնեայ թաթար լինի կամ մահմէտական թաթար։

Մ. Փ.

ԲԱՂՔԷՇԻ ՄԷՋ ԵՂԱԾ
ԲՐԻՒՔԱՀԱՅԹԻՒՆՆԵՐԻՆ ԱՌԹՈՎ

Կ.պոլսի անգլիական դեսպանատունը Բ.Դրան դիմումներ ըրած է, բողոքելով Բաղէշի ոստիկանապետ Ալի պէյի վարմունքին դէմ որ իբրև թէ Բաղէշի նահանգի Ախլաթ գիւղին մէջ Հայ յեղափոխականներ և զէնքեր գտնելու պատրուակով սոսկալի նեղութիւններ է հանած խեղճ գիւղացիները։ Ալի պէյի բարբարոսական վարմունքի մասին այնպիսի սոսկալի բաներ կը պատմուին որ մարդ չէ կարող զայրոյթը զսպել։ Ցեղափոխականներ գտնելու համար տուներուն խուզարկութիւնները վերջ չեն գտներ, բանտերը խեղճ Հայ գիւղացիներով կը լեցուին, կը տեսնուի որ ո՛չ զէնք կայ և ո՛չ իրենց վնասած մարդկը. բայց գարձեալ կը շարունակեն խուզարկութիւնները որովհետև այդ պատրուակ իրենց համար միջոց մը գարձած է թէ՛ իրենց բարբարոսական կիրքերը յագեցունելու Հայերին դէմ և թէ՛ այս ու այն բանտարկելով և վախցունելով կաշառք առնելու։

Անգլիական դեսպանատունը խընդրեց նաև Բ.Դուռէն որ որչափ կարելի է շուտով Պիթլիսի համար նոր վալի մը նշանակուի մեռած վալիին տեղ։

ՎԱՆԻ ՄԷՋ ԵՐԿՈՒ ՀԱՑԻ
ԿԱԽԱՂԱՆԻ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԻԼԸ

Կ.պոլսէն կը հեռագրեն օգոստ.25ին թէ վանի մէջ երկու յեղափոխական Հայեր մահի պատժին դատապարտուեր են։ Բայց կը կարծուի որ Սուլթանը պիտի թեթևցունէ այդ պատիժ։

գտնուիլ. այսու ամենայնիւ, «ինքըր Ո. չընի» թղթակիցներն ոչ միայն ներս մտան, այլ նաև պատիւ ունեցան եկեղեցականներին, անոնց արքանեակներին և ուսանողներուն հետ միատեղ ճաշելու։ Ուսանողներն ու վարդապետները հոգ տարին մեր մարդերին։ Հայր Ցովսէփ ներս մտած կր և ճաշը սկսած էին երբ Տիկին McLirath և ես տեղ ունեցանք սեղանին գլուխը եկեղեցականներին մէջ. բայց այս միջադէպ երբէք չը խանգարեց կարգ ու կանոնը։

Սեղանատունն այնքան մեծ էր, որ սեղանների երկու կարգերը կարծես սենեակի մէկ անկիւնը կը ծայրին. 300է աւելի անձնաւորութիւններ նստած էին քթանով ծածկուած տախտակէ նստարանների վրայ. միայն ձիւնագոյն ծածկոցը, սպիտակ ձեռքերը, լեցուած պնակները և հնծելանուորդի գլխաւոր հագուստներս խանգարեցին սեռագիտաների այն երկար չարքը որ մէկ ծայրէն մինչև միւս ծայրը կը հասնէր։ Գիւղի մը ժողովուրդ միատեղ կուտէին և սակայն ձայն մը, սաստիկ խնդում մը կամ բարձրաձայն խօսակցութիւն մը չկար, թէև ամենքն ալ խնդուժերես և զուարթ էին։ Խումբ մը սպասաւորներ վեր վար կերթան կուգան, ծառայելով անօթի բազմութեան մը. և հացի նկանակ մը տեղաւորելէ յետոյ, բաշխեցին մեզի պնակ մը տեղային պանիրէն, բուռնց մը կանաչեղէն իւրաքանչիւրիս պնակին մէջ և մեծ թաս մը էչի (etchi). էչին յովկասեան բնիկներու ապուրն է. իր բաղադրութիւններն են կաղամբ, տեսակ մը կարմրագոյն համեմանք և միս։ Ամեն մարդու բաժինն է եղամսի մեծ կտոր մը և լի դգալով մը թթու սեր (մածուն?) որ կընէ յոյժ համեղ և անդադար պնակ մը։ Աւոր կը յաջորդէ յօշած (գեյմա) կլորիկներ (քիւֆթա). փաթթուած համեղ տերեւներով (հաբքաղ). և երկրորդ կերակուր մը այնքան համեղ որքան առաջինը։ Ցետոյ սրուակ մը ճերմակ գինի, անարատ. չոր և չոլշոլուն գոյնով։ Անոր անմիջապէս յաջորդեց գլխաւոր կերակուրը, փիլաւ, բրինձէ և չամիչէ։

Մասնաւոր կանոն մը չկայ ուտելու ձեւի համար. միայն թէ գինին մէկ չի-

---

ՀԱՐՕՏԱՀԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ Ի ԹԻՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆ

Քէմախէն (կամախ, երզնկայի նահանգին մէջ) գրուած մի նամակէ կը քաղենք հետևեալ տողերն որոնք կրնան մի գաղափար տալ նաև այդ կողմեր ուրիշ գիւղերի մէջ պատահածների վրայ։

Մեր ճար հատած է, ապրելու ա՛լ կարողութիւն չէ մնացած։ Մեր ամէն բան թալնեցին տարին, մեզ թողուցին մօրէ նոր ձնած մերկ։ Փոխ դրամ առինք տոկոսով որ հիմակ մեր վրայ կը բանի. այդ դրամով մէկ լուծ եզ առինք։ Մէկ լուծ եզով կարող չեղանք ցորեն ցանէինք, Ջաթիր պահանջը քիչ մը գարի ցանեցինք, ան ալ եկան իրենց անասուններուն կերուցին, մեզ չթողուցին։

Պարտք ըրինք տոկոսով ստակ առինք որ տուրքերը վճարեցինք. պարտք ըրինք տոկոսով որ իյանէ (օգնութիւն, պատերազմէն ջնջուած զօրքերիննպաստի հանգանակութիւն) տուինք։

Հազար նեղութիւններով կը վճարենք տուրքերը, բայց մեզ պաշտպանող կառավարութիւն մը չկայ։ Տաճիկ, Քուրդ կուգան մեր արտերը կը ցանեն իրենց համար, մեր ցանածն ալ կը կերցունեն իրենց եզերուն, կովերուն, ոչխարներուն։ Ջաթիրը պահան ըսուած տեղը գիւղէն կէս ժամ միայն հեռու դաշտ մ՚է։

Մեր այգիները, պարտէզները, ծառ, ճիւղ մերն են ու մեր չեն. կը քանդեն, կը թալնեն, կը տանին Տաճիկն ու Քուրդ, մեզ բան չեն թողեր. ա՛լ մեր ճար հատած է, ի՞նչպէս ապրինք։ Ձմեռն ալ կուգան մեր քաղաք խոտերը կը տանին. ո՛րը ձիով կուգայ, ո՛րը ջորիով և կը պօռայ. «պիչէ օթ վէրի՛ն». ո՞վ կրնայ ըսել թէ չեմ տար. վա՛յ այն մարդու գլխուն ի՛նչ ձիւն կը տեղայ, ի՛նչ փորձանքներ կը բերեն։ Ցաւ մ՚ալ այս է որ ձիւն, ջուրին մենք մեր ձեռքով պիտի բեռնենք որ անոնք առնեն տանին։

Առաջները 30–40 Տաճիկ, Քուրդ ամեն օր կուգային փորերնին կը կըտացունէին ու կերթային. հիմակ կը

թալեն կը քանդեն կը տանին և մեզ ալ կը նեղեն ու կը չարչարեն. չենք գիտեր թէ մեր վիճակ այսպէս ի՞նչ պիտի ըլլայ։ Իրենց որ հարցնես, կըսեն թէ «կեավուրա զէնկինլիք եագըշմազ, ալթա պինմէք եագըշմազ. կեավուրըն պաշընա վուրմազ, էլինէն ալմազ, պիզէ հէլալ տըր. Ալլահ սիզի եարաթմըշ պիզիմ իչուն. սիզ չաշըշմալըընըզ, պիզ նէմէլի. էչէք տէ չալըշըր ալթալը իչուն»։

Ահա՛ այս է մեր վիճակ. լսեցէ՛ք ու ճար մը մտածեցէք, գիտունն՛ը, իմաստուննե՛ր, հարուստնե՛ր, մեծապատիւնե՛ր. եթէ դուք ալ չօգնէք, ո՞վ պիտի օգնէ ձեր եղբայրներուն, ձեր քոյրերուն. թողեր էք մեզ գայլի բերան որ պատառէ, բէգռատէ. մեր վրայ կարողութի՞ւն է մնացեր որ անոր ատամներու դէմն առնենք։ Եթէ դուք ալ ճար մը չմտածէք, մենք ա՛լ կորսուած ենք, հայութիւն չմնար այս կողմերս։ Թոզճայէ՛ք մեզ, յիշեցէ՛ք ձեր ծնունդը, ձեր աղգութիւնը և մի՛ մոռնաք որ մայր-հայրենիք մը ունինք այստեղ որ ծներ է ձեզ, որ կեանք է տուեր ձեզ և այսօր կարօտ է ձեզ։

ԹԻՒՐԲԻԱԷՆ ԼՈՒՐԵՐ

Ամերիկեան գործարանէ եկած 200 միլիոն մաղէրեան փամփուշտ օսմանեան բանակին յանձնուելու համար պայմանագիրը ստորագրուեր է օգոստ. 18ին։

— Սուլթանը հրամայեր է որ Ամանիսի վիլհելմ կայսրի պատուին համար տրուելիք հանդէսներուն պատրաստութիւնները վերջանան մինչև այս ամսի վերջ։ Օգոստոս 31ին որ Սուլթան Համիտի գահակալութեան 22րդ տարեդարձի օրն է, այդ հանդէսներուն և լուսավառութիւններուն մէկ նախապորձը պիտի լինի Եըլտըզ քէօշքին և անոր շրջապատող պարտէզներուն մէջ։

— Բ. Դուռը առաջարկեր է ռուս կառավարութեան, կ. պոլսի դեսպան Տ. Զինովիեվի միջոցով, որ պատերազմական տուգանքէն մնացած 9 միլիոն օսմ. ոսկի իր պարտք վճարէ 5

ձրաձան խօսակցութիւն մը չկար, թէև ամենքն ալ խնդուժերես և զուարթ էին։ Խումբ մը սպասաւորներ վեր վար կերթան կուգան, ծառայելով անօթի բազմութեան մը. և հացի նկանակ մը տեղաւորելէ յետոյ, բաշխեցին մեզի պնակ մը տեղային պանիրէն, բուռնց մը կանաչեղէն իւրաքանչիւրիս պնակին մէջ և մեծ թաս մը էչի (etchi). էչին յովկասեան բնիկներու ապուրն է. իր բաղադրութիւններն են կաղամբ, տեսակ մը կարմրագոյն համեմանք և միս։ Ամեն մարդու բաժինն է եղամսի մեծ կտոր մը և լի դգալով մը թթու սեր (մածուն?) որ կընէ յոյժ համեղ և անդադար պնակ մը։ Աւոր կը յաջորդէ յօշած (գեյմա) կլորիկներ (քիւֆթա). փաթթուած համեղ տերեւներով (հաբքաղ). և երկրորդ կերակուր մը այնքան համեղ որքան առաջինը։ Ցետոյ սրուակ մը ճերմակ գինի, անարատ. չոր և չոլշոլուն գոյնով։ Անոր անմիջապէս յաջորդեց գլխաւոր կերակուրը, փիլաւ, բրինձէ և չամիչէ։

Մասնաւոր կանոն մը չկայ ուտելու ձեւի համար. միայն թէ գինին մէկ չի-

---

չէն ուզեր չը տրուիր (իւրաքանչիւր անձ՝ իւրաքանչիւր ճաչի համար)։ Գինին կեղնէ էչմիածնէն և լաւ տեսակէն է, գլուխս չզարներ։ Սեղանին այն ծայրը ուր կրօնաւորները չրջապատած են, կտղնիէ աթոռ մը կայ, ընդարձակ ամպհովանիի մը ներքև, ուր սեղան մը և առանձին աթոռ մը ևս կայ։ Այդտեղ է որ խնջոյքի օրերը Կաթողիկոսը կը նստի. բայց այնպէս կըսուի որ թէև կը նստի հոդ, բայց բնաւ չուտեր։ Երբ ակնարկ մը տալէ յետոյ կը տեսնուի որ ամեն պնակ, պատառաքաղ, դանակ և դգալ անգործ կը մնան, սեղանակից հայրերի երիցագոյնը իր աթոռը ետ կը քաշէ, որով ձայնը բոլորը ոտքի վրայ կը հանէ. և րոպէի մը մէջ ամենքն ալ լռելեայն հանդարտ կըլլան. տարիքոտ հայրը՝ Ս. Երրորդութեան օրհնութիւնը կը հայցէ սեղանին վրայ և 300 մեռքեր անմիջապէս խաչակնքման նշանը կընեն և ճոխ ճաշէն կշտացած կելնեն։

***

(Շարունակելի)

տարիէն, տարին 1½ միլիոն ոսկի տա-
լով. այդ վճարքի կէսը պիտի ապա-
հովուի աղձամի (ոչխարի) տուրքով,
կէսն ալ մաքսատուրքով։ Ռուս կա-
ռավարութիւնը պահանջեր է որ այդ
տուրքեր Հանրային Պարտքի վար-
չութեան միջոցով հաւաքուին և յան-
ձնուին իրեն։ Բայց Պարտքի վարչու-
թեան անդամներուն մեծամասնութիւ-
նը, այսինքն Ավստրիացի, Աստրիա-
ցի, Անգլիացի և Իտալացի պատուի-
րակները, դժկամակութիւն ցոյց կու
տան այդ պահուն ստանձնելու։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՆՈՐ ՍՈՒԼՏԱՆՈՐԴՆԵՐԸ

Պարսկաստանի նոր առաջնորդ
Գեր. Սահակ եպիսկոպոս Այվատեան
և Թէհրանի ու Հնդկաստանի նոր ա-
ռաջնորդ Գեր. Մաղաքիա եպիսկոպոս
Տէրունեան յուլիս 23/4 օգոստոսի
հինգշաբթի օր մեկտեղ հասեր են
Գաւրէժ ուր թէ՛ Հայ ժողովուրդին,
թէ՛ պարսիկ կառավարութեան և թէ՛
օտար հիւպատոսների կողմէն շքեղ
ընդունելութիւն եղեր է իրենց։

Գեր. Սահակ եպիսկոպոս ուղեկի
ցներուն առաջնորդուելով իր օրհ-
նութիւններ տուեր է ժողովուրդին նոյն
օր. իսկ կիրակի օր ալ իր առաջին
քարոզ տուեր է, նիւթ ունենալով
ժողովուրդի և առաջնորդի փոխադարձ
պարտականութիւնները և անոնց հա-
մերաշխ գործակցութեան արդիւնք-
ները։

Գեր. Այվատեան սկսած է արդէն
մղում տալ դպրոցական գործին։

ԽՈՎՈՒԹԻՒՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Հեռագիրը կիմացնէ որ Գաւրէ-
ժի մէջ օգոստ. 23ին ծանր անկարգու-
թիւններ ծագեր և շատ մը մարդեր
սպաննուեր են։

Խռովութեան պատճառն այս եղած
է որ Գաւրէժցիները ուզեր են ար-
տաքսել ազդեցիկ կրօնաւոր մը։

Հանդարտութիւնը վերահաստատ-
ուեր է և տեղական իշխանութիւնները
խոստացեր են փոխել տալ այդ կրօ-
նաւորը։

— Վերջին հեռագրի մը նայելով,
խռովութիւնը նորէն սկսեր, ամբո-
խին վրայ զէնք պարպուեր է և հինգ
հոգի սպաննուեր են։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Շնորհակալութեամբ ստացանք Ա-
խարհ անուն մի չաթաթաթերթի 3
թիւերը մեկտեղ որ նոր սկսեր է հը-
րատարակուիլ Վառնայի մէջ։

Առաջին թիւին մէջ որ կիրակի
յուլիս 26 (Հ. Տ.) թուականը կը կրէ,
խմբագրութիւնը կարճ ու ամփոփ
կերպով ներկայացուցեր է «Աչխարհի
ուղեկիցը» որմէ կը քաղենք հետա-
քրքիր տողերը.

«Աչխարհի դերը կարևոր է և մեծ։
Անիկա կոչուած է, իր կարող և հմուտ
աչխատակիցներուն շնորհիւ, թօթա-
փել թմրութիւնը Հայ հասարակու-
թեան, անոր ճանչցնել ինքզինքը և
զանիկա դնել իր պատմական ուղիին
մէջ, ոգևորող դիւթական մագնիսը
ղգացնել տալով անոր ընկերային յե-
ղափոխութեան փրկարար հեռապատ-
կերին մէջ։»

Երկրորդ թիւին մէջ իմացուցեր է
որ փոխանակ կիրակիի երեքշաբթի
օրեր պիտի հրատարակուի։

Իսկ երրորդ թիւնիմէջ ալ ծանուցեր
է որ Աչխարհ ժամանակաւոր դադար
մը պիտի ունենայ, փոխադրուելու
համար Ռուսճուք ուր անունն ալ փո-
խելով, Երիտասարդ Հայաստան ա-
նունով պիտի հրատարակուի աւելի
մեծ ծաւալով և չաբաթը 2 անգամ։

Հետևապես ա՛լ պէտք չմնար մեզ
«Աչխարհ»ի բաժնորդագրութեան և
այլ պայմանները յայտարարելու, սա-
կայն իրենց ուրիշ նոր անունով հրա-
տարակելիք նոր թերթին։

ՎԻԼՀԵԼՄ Բ Ի ՁԱՆՁՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Պէրլինէն կը հաղորդեն թէ Թիւր-
քիոյ և Ծովնաստանի միջև յարաբե-
րութիւնները բարւոքումը Ավստրիոյ
Վիլհելմ կայսրի միտքը փոխել տուեր
է որ վերջերս լաւ ընդունելութիւն ը-
նար իր քեռայրին, Ծովնաստանի գա-
հաժառանգ կոստանդինին իշխանին։
Վիլհելմ Բ խոստացեր է Երուսաղէմ
ճանապարհորդութենէն վերադարձին
Աթէնք ալ հանդիպիլ։

— «Քէօլնիշէ Զայթունկ» ավանա-
կան լրագիրը կառավարութենէն ներ-
շնչուած յօդուածով մը կը յարձակի
Հաւասի հեռագրական գործակալու-
թեան վրայ, ըսելով թէ այդ գործա-
կալութիւն կուզէ գժտեցնել Ավստ-
րիան Աստրիոյ և Ռուսիոյ հետ և
կը փորձէ դժուարութիւններ ծագե-
ցնել Ավստրիոյ և Անգլիոյ միջև,
հրատարակելով թէ Վիլհելմ կայսրը
չէ ուզեր Անգլիացիներուն հիւր լինել
Եգիպտոսի մէջ։

«Քէօլնիշէ Զայթունկ»կը յայտարարէ
թէ կայսրը երբէք այդպիսի հրաւէր
մը չէ ստացած Անգլիացին որ զինք ըն-
դունելու պատրաստութիւնը կը թողու
Խըտիվին։

«Քէօլնիշէ Զայթունկ»ի բարկու-
թեան պատճառը դիւրաւ կը հաս-
կցուի երբ նկատենք որ այս միջոցին
Ջանքեր կը լինին Ծայրագոյն Արևելքի
մասին մի համաձայնութիւն գոյացու-
նելու համար Ավստրիոյ և Անգլիոյ մի-
ջև։ Ինչպէս կ.պոլսի, նոյնպէս և Զի-
նաստանի մէջ Ավստրիա Ռուսիոյն խաղ
կը խաղայ և անոր տեղը բռնել կաշ-
խատի։ Վիլհելմ կայսրը, Պիսմարքի
մեռնելէն յետոյ, նորէն Քաբրիվի զօ-
րավարի քաղաքականութեան կը
դառնայ։

— Բէթերսպուրկի «Նովոյէ Վրե
միա» կիսապաշտօնական լրագիրը գո-
հունակութիւն կը յայտնէ որ Վիլհելմ
կայսրը մերժեր է Անգլիոյ հիւրը լի-
նել Եգիպտոսի մէջ։ «Եթէ ընդու-
նէր, կըսէ ռուս լրագիրը, Եգիպտա-
սիոն Անգլիացիներէ գրաւման մի տե-
սակ վաւերացում տուած պիտի լինէր
որմէ օգուտ պիտի քաղէր Անգլիա նոր
տհաճութիւններ պատճառելու համար
Ռուսիոյն որ Եգիպտոսի խնդրին մէջ
Ֆրանսայի արդարացի պահանջները
կը պաշտպանէ բացարձակապէս։»

ՍՊԱՆԻԱ ԵՒ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ

Վաշինկթոնէն կը հեռագրեն «Ցէյ-
լիբրօնիքլ»ին թէ ամերիկեան կառա-
վարութիւնը պիտի ընդդիմանայ Ա-
մոա կղզիներէն բաժանման որ Ավստրիա
առաջարկած է։

— «Թայմզ»ի Նիւ Եորքի թղթա-
կիցը կը հեռագրէ թէ Ամերիկայի
լրագիրները հետզհետէ աւելի խիստ
լեզու կը բանեցունեն Քուպացի ապըս-
տամբներուն դէմ։ «Հէրալտ» կըսէ թէ
Քուպացիները չեն ուզեր կամ չեն
կրնար հասկնալ թէ Սպանիան և
Միացեալ Նահանգներն միջև խաղա-
ղութեան սկզբնական դաշնագիրը ըս-
տորագրուած լինելով, ոչ միայն ապօ-
րինաւոր է Սպանիացիներուն վրայ
յարձակիլը, այլև այդպէս վարուելով
կուշացունեն պատերազմի ղեկաւոր
նպատակին, այսինքն Քուպայի անկա-
խութեան իրականանալը։

«Իվնինկ Բօսթ» կըսէ թէ Քուպա-
ցիներն ապստամբական մանաժողովը
պէտք է դադրեցունել տայ ապըս-
տամբներն թշնամութիւնները, ապա
թէ ոչ կը պարտաւորցունէ Միացեալ
Նահանգներն կառավարութիւնը որ
ինք ելնէ զսպէ ապստամբութիւնը։

Ամենէն չափաւոր լրագիրներն ալ
կը գրեն թէ ապստամբներն այս ան-
հանդարտ վարմունքին առջև, անգը-
րութիւնը վերահաստատելու պատաս-
խանատուութիւնը Միացեալ Նահանգ-
ներուն վրայ կիյնայ։

— «Կլոպ»ի Նիւ Եորքի թղթակի-
ցը կը հեռագրէ թէ օրուան խնդիրն
եղած են հիմա Աշնեզ Շաֆիլըր և
Միլէս զօրավարներն և Սանթիագոյի
արշաւանքի ուրիշ հրամանատարներն
գանգատները պատերազմական պա-
տասխանատու պետական քարտուղար Տ.
Ալժէրի դէմ։ Տ. Մաք Քինլի Տ.Ալժէ-
րի հրաժարականը խնդրեր է։ կը յու-
սացուի որ քննիչ ժողովի մը կը յան-
ձնուին եղած ամբաստանութիւնները։

— Շաֆիլըր զօրավարը վաշինկ-
թոն հեռագրեր է ուղերձի մը բովան-
դակութիւնը որ 11,000 սպանիացի
զօրքերն կողմէն յանձնուեր է իրեն։
Այդ ուղերձով սպանիացի զօրքերը
գովեստ կը կարդան Ամերիկացիներն
վարմունքին որոնք խնամ տարած
են իրենց մեռելները թաղելու, վիրա-
ւորուածներուն օգնելու, յաղթուած-
ներին պատսպարան և պաշար տալու։
կը պարսաւին Քուպացի ապստամբ-
ներն վարմունքը որոնք, կըսեն ու-
ղերձին ստորագրողները, կանոնաւոր
կռուէ կը փախչին և անարժան են ա-
զատութեան։ Ուղերձը կը վերջանայ
երախտագիտութեամբ մեծ բարով
մաղթելով Միացեալ Նահանգներն
զօրաբանակին և իղձեր յայտնելով ա-
մենասիրելի հայրենիքէն խլուած եր-
կիրներն երջանկութեան և բարգա-
ւաճման համար։

— Սպանիա վերադարձող զօրքերն
առաջին խումբը օգոստ. 24ին Քօրն-
նըլի սպանիական նաւահանգիստը հա-
սաւ «Ալիքանդ» չոգենաւով։ Սպա-
նիոյ խնամակալ թագուհին բարե
գալուստի և չնորհաւորութեան հեռա-
գիրը ղրկեց իրենց։ Շատ հիւանդներ
կան իրենց մէջ։ Ճանապարհին չոր
մարդ մեռեր է չոգենաւին մէջ։

— Սպանիոյ թագուհին հրաման
հանեց երեսփոխանական ժողովը գու-
մարելու սեպտ. 5ին։ Խաղաղութեան
դաշնագիրը ժողովին ներկայացուելով
պիտի վաւերացուի։

— Վաշինկթոնէն կը հեռագրեն
«Տէյլի Մէյլ»ին թէ կառավարու-
թեան անդամներէ մին յայտարարեց
որ Տ. Մաք Քինլի, փիլիպպեան
կղզիներուն նկատմամբ, հետեւել հը-
րահանգները պիտի տայ խաղաղական
յանձնաժողովի անդամներուն.

«Միացեալ Նահանգներն իրենց
պիտի սեպհականեն Լիւզոն կղզին. Ը-
սպանիոյ հետ առևտուրի դիւրութիւն-
ներ պիտի տրուին արշիպելագոսի
միւս կղզիներուն մէջ. կղզիներէն և ոչ
մէկը պիտի տրուի ուրիշ տէրութեան
մը. ատոնցմէ զատ, ամերիկեան կա-
ռավարութիւնը կուզէ որ տէրութեան
և եկեղեցիին միջև գոյութիւն ունեցող
յարաբերութիւնները խզուին ամբողջ
արշիպելագոսին մէջ։»

Ծանձնաժողովին անդամները մինչև
առաքման մը ընդարձակ իրաւունքներ
պիտի ունենան բանակցութեան հա-
մար, բայց վերոգրեալ հիմնական
հրահանգները փոփոխութեան չպիտի
ենթարկուին։

— Մանիլէն եկած մի հեռագիր կի-
մացունէ թէ ապստամբապետ Ակուի-
նալտօ Ջրի խողովակները կտրեր է
այնպէս որ քաղաքը Ջրէ զրկուեր է։

Վաշինկթոնէն մի հեռագիր կըսէ
թէ կառավարութիւնը հաստատապէս
որոշած է չղիջանիլ Ակուինալտօի պա-
հանջներին։

— Սպանիոյ թագուհին կարլոս
Գ կարգի մեծ խաչի պատուանշանը
տուեր է Ֆրանսայի արտաքին գոր-
ծերի նախարար Տ. Տելքասէին, վա-
շինկթընի դեսպան Տ. Փիւլ Քամբո-
նին և Մատրիտի դեսպան Տ. Բոմ-
նօթրին։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Գահիրէէն կը հաղորդեն թէ Օմ-
տուրմանէն եկած լուրերուն նայելով,
Տէրվիշներն խալիֆան մեծ ոյժեր կը
կեդրոնացունէ Օմտուրմանի բոլոր-
տիքը. որոշած է եղեր անոնցմէ ըս-
պասել այդտեղ անգլեգիպտական
բանակին, կը հաշուեն որ անգլեգ-
իպտական զօրքերն դլխաւոր հրա-
մանատար Քիչնէր զօրավարը սեպտ.
10ին կը հասնի Օմտուրման։

— Քինկթօնէն (Եամայիքա կղզի)
Նիւ Եորք տրուած մի հեռագիր կըսէ
թէ «Մինչդեռ Անթիլեան կղզիներն
չաքարներուն համար պատուիրակներն
ժողովը կը պատրաստուի հաւաքուիլ
Պարպատի մէջ սեպտ. 3ին, Եամայի-
քան ալ կը պատրաստուի ժողովրդա-
յին քուէարկութեան դիմել սա կըն-
դիր որոշելու համար որ անգլիական
կորնդրդարանէն խնդրուի որ Եամա-

յիքային թոյլտուութիւն լինի Միացեալ Նահանգներին հետ ձուլուելու համար բանակցութեան մտնելու։ Այս շարժման աշխատողները կը լանան որ ուրիշ գաղութներ ալ համազգն իրենց հետ միանալու համար, բայց չատ յոյս չունին անոնց վրայ։»

— Հաւաի կղզիները վերջնականապէս միացան Ամերիկայի Միացեալ Նահանգներին հետ։ Օգոստ. 12ի ա. ռաւօտ հանդիսաւոր կերպով պաշտօնապէս պարզուեր է Միացեալ Նահանգներու դրօշակը Հաւաի կղզիներին վրայ։

— Լոնտոնի քաղաքապետը որ մի ճանապարհութիւն պիտի ընէր Միացեալ Նահանգները, իր կնոջ հիւանդութեան պատճառով պարտաւորեցաւ այդ ժամադրութենէն յետ կենալ։

— Բէլթէրապուրկէն կը հաղորդեն օգոստ. 1/13ին թէ Ֆերգանեան նահանգի Անտիժանի և Օշի մէջ ձերբակալուած ապստամբ մահմէտականներէ երրորդ և չորրորդ խումբերի դատաստանն ալ վերջնաւորվ, 162 հոգիէն 8 անպարտ արձակուեցան, 1ը անչափահաս լինելուն համար ազատականոց դնելու վճիռ տրուելու։ իսկ մնացած բոլորն ալ կախաղանի դատապարտուեցան։ Ի վերջոյ, զազան ոգերսական դիմումներէն և միջնորդութիւններէն վերայ դիմելով Զարը, ատոնց մահու պատիժը փոխարկեր է ցկեանս տաժանակիր աշխատանքի, բայց երեքէն որոնք յուլիս 18/30ին Անտիժանի մէջ կախաղան հանուելով սպաննուած են իրենց ապստամբապետներուն պէս։

— Րումանիոյ Թագաւորն ու թագուհին քիչ օր եկած են Բակայ (Զըւիցերիոյ մէջ, աւստրիական սահմանագլխին մօտ) ուր պիտի մնան բաւական երկար ժամանակ։

— Սերպիոյ Ալեքսանդր թագաւորը վիէննայէն մեկնելով գնաց Քարլսպատի ջուրերն ուր ամեն տարի կերթայ իր առողջութեան համար։

— Եգիպտոսի խըտիվը որ այժմ Եւրոպա կը գտնուի, այս օրերը կերթայ վիչիի ջուրերը ուր արդէն կը գտնուի իր ազգականներէն իզզէդդին։

ԿԱՐԵՒՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Եթէ կայ արտասահմանի մէջ այնպիսի վարպետ խեզաբոյժ (խրրխաձի) մը որ կրնայ ձգտած թիւս չոկել, կը խնդրեմ ինձ հետ բանակցութեան մտնել։ Թիւս կոտրած տեղն է արմուկիս և գաստակիս մէջտեղը որ երկու տարի առաջ չոկելու համար բժիշկներն անհոգութեամբ իրար վրայ դրեր են ոսկորները, փոխանակ քով քովի կցելու, և մնացած է այժմ գրէթէ անդործածելի։

Լսած ենք թէ չատ վարպետ հայ խեզաբոյժներ կը գտնուին Կ. պոլսի մէջ օրանք 10–12 տարուան կոտրած և ծուռ չինուած ժստերը նորէն կը կոտրեն և բոլորովին կատարելացնեն։ Եթէ տուեալ մէկը կը գտնուի այժմ արտասահմանի մէջ որ կարող է թիւս նորէն բուժել և կապահովցնէ զիս, կը խնդրեմ բանակցութեան մտնել ուղղակի ինձ հետ։

Հասցէս

Stephen Yeranian
8, Delhi str.
PROVIDENCE R. I.
(Etats Unis d'Amérique)

ՄԱՆՈՒԿՅՈՒՄՆԵՐ

ՀԱՑ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱՑ (1794–1894) ԾՈՒԵԼԻՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Հայ տպագրի մէջ լրագրի սկզբնաւորութեան դարադարձին առթիւ 1894 թուականին հրատարակուած այս միաժամ դիրքով և լուսատիպ (phototypique) չքեղ պատկերի մեծութիւնն է 50×35 հարիւրորդամէթր և ապուած է 70×45 հարիւրորդամէթր քարտոնի (carton) վրայ այլ և այլ բնագրովի Մէյմեզը դրուած է հայ լրագրութեան հիմնադրին, Տ. Յարութիւն Քհնյ. Շմաւոնեանի, պատկերը և բոլորտիքը՝ 1894ին հայերէն լեզուով հրատարակուող բոլոր լրագիրները, անոնց գրեթէ ամենքի խմբագրապետներէ պատկերներովը։

Գինն է 4 ֆրանք, հանապարհածախքովը մէկտեղ հաշուած. իսկ գարակատանի համար 2 ֆրանք և 50 սանթիմ։

***

Գահիրեցւոյ Հ. Գ. — Պատմութիւն Հայ լրագրութեան իւ սկզբանէ մինչև մեր ժամանակը. Հատոր Ա. 1794-1860։ Մէկ լուսատիպ պատկերով։ Գինն է, հանապարհածախքովը մէկտեղ, 2 ֆր. և 50 սանթմ.։

Վերոգրեալ թէ՛ պատկերը և թէ՛ գիրքը կարելի է սոանալ Արմաւիրի խմբագրատունէն, արժէքը կանխիկ ղրկելով։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Մ. Փորթուգալեանի հրատարակած գիրքերուն վերայ մանաւոր զեղչ կը լինի Գարսկատանի Հայերուն համար որոնց կը ղրկուի փոսկագծի մէջ նշանակուած գիներով։

Ա. ՀԱՑ ԳԻՒՂԱՑՈՒԹԻՒՆ ՄԸ (Սպառած)
Բ. ՀԱՑ ԳԻՒՂԱՑԻ »
Գ. ՍԱՂՄՈՍ ԻՕՐԱՑԵԼԻ »
Դ. ԱՋԱՑՈՒԹԻՒՆ ԳՈՒԼՂԱՐԻՈՑ ԵՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԳ ԳՈՒԼՂԱՐ ԱՋՑՅԱՍՔՈՑՑՈՑ (Սպառած)
Ե. ՀԱՑԱՍՏԱՆԻ ԹԵՈՒԱԴՆԵՐԸ.—(Հայաստանեայց պանդխտութեան տխուր հետեւանքներէ մէկ փոքրիկ պատկերը կը ներկայացնէ վիպական կերպով։) Գինն (90 սնթմ.) 1 ֆրանք 20 սնթմ.
Զ. ԳԱՄՍԱՑ ՔԱՔԻՑ — ՅՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹՆՐՑՈՒԹԻՒՆ յետ ալբոմիճի տարուելոց (Սպառած)
Է. ԼԻՆԱՑ ՕՐԵՆԴԸ ՅԱՁՈՒՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ. (Սպառած)
Ը. ԹԻՒՐՔԻԱՅ ՀԱՑԵՐՆ ՆԻ ԻՐԵՆՑ ԴՐՈՑԻՆԵՐ (Թիւրքիոյ Հայերուն և իրենց դրացի ազգերուն վերայ վիճակագրական և ցեղագրական տեղեկութիւններ կը պարունակէ։ Թիւրքահայաստանի մէջ բնակող այլ և այլ ազգերէ քանակիչներուն թուին բազդատական մէկ ցուցակն ալ կցուած է տետրակին վերջը։) Գինն 50 սանթիմ (35 սանթիմ)։
Թ. «ԱՐՄԷՆԻԱ»ի ՑՈՒՇԱՐԱՐ (Արմենիոյ Ս. տարեշրջանի թիւերը այժմ բոլորովին սպառած և միեւնոյն ժամանակ չտեսերի հետաքրքրութեան առարկայ դարձած լինելով, այդ շրջանի էջ և ծանոթագրութեան գրած առաջնորդողները ստիպուածներէն դէթ 30ի չափ ամփոփուած են Ցուշարարի մէջ որ ուրացած դիրքով 124 երեսներէ կը բազկանայ) (1 ֆրանք)։ 1 ֆր. 40 սանթիմ
Ժ. ՎՐԷԺ (Պուլկարիոյ մէջ Թիւրքերէն արած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացնէ և ցոյց կուտայ թէ Պուլկարներն ի՛նչպիսի մի ջոցներէ դիմած են իրենց վրէժ լուծելու համար)։ (15 սնթիմ) ,20 սնթիմ
ԺԱ. ԹՈՄԱՍ ՐՈՑԱՐԻՍ (Ցունաստանի մէջ Թիւրքերէն արած բարբարոսութիւն. Ներկեն մի փոքրիկ պատկեր կը ներկայացնէ և ցոյց կուտայ թէ Յոյներ ի՛նչպիսի միջոցներէ դիմած են իրենց վրէժ լուծելու համար), (0,15սանթիմ) 20 սանթիմ։

ՄԱՆՈՒ ԳԻՐՔԵՐ

Արմաւիրի խմբագրատան մէջ ծախու կը գտնուին հետեւեալ գիրքերը որոնց առջեւ նշանակուած գիներին մէջ հաշուուած է նաև ղրկելու փոստի ծախքը։

Ծրարները ապահովագրուած (recommandé-registered) ստանալ ուզողները պէտք է որ ամեն մէկ ծրարի (մինչեւ 2 քիլօ) համար 25 սանթիմ ապահովագրութեան ծախքը վճարեն։

— ՊԻՏԱՆԻ ԴԻՏԵԼԻՔՆԵՐ. (Յատկապէս պատրաստուած Ամերիկայի Միացեալ Նահանգաց Հայ գաղթականներուն կեանքի, ժամանակի և դրամի խնայողութիւն ընել տալու հարկ եղած դիւրութիւններն ընծայելու համար։) Աշխատասիրեաց պետրոս Ռ. Թորոսեան. Տպագր. Նիւ Եորք, Լիլիաս Խալաւ և ընկ. 1897, Ամերիկա գնացող Հայերին և կամ արդէն հոն գտնուղներուն համար չատ կարեւոր գիրք է։ Գինն է 1 ֆրանք և 25 սանթիմ։

ՄԻ ՊՈՒԼԿԱՐ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ (ՋԱՖԱՐԻԱ ՍԹՈՑԱՆՈՎ)

ՏՐԱՆՍԵՐԻՆԷ ԹԱՐԳՄԱՆԵՑ
ՄՆՐՑԱԿ ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ
1894

Պուլկարիոյ անկախութեան հեղինակէ մէկին, Ջաֆարիա Սթոյանովի, որ իր ընդունակութեան շնորհով յաջողեցաւ մի լեռնականէ գիւղացի հովուի պարզ վիճակէն հետզհետէ արհեստաւոր, վաճառական, ազգապետ, յետոյ քաղաքական գործիչ, խմբագրապետ և վերջապէս ազատ Պուլկարիոյ Ազգային ժողովի նախագահ դառնալ, խիստ հետաքրքրաշարժ կենսագրութիւն է, ուր ազատութեան արժանի տեղեկութիւններ կան նաեւ Պուլկարիոյ Թիւրքի լուծէն ազատելու աշխատող պուլկար հայրենասէր յեղափոխականներու գործունէութեանը մասին։ Սկիզբը գրուած է նաեւ հեղինակին, Բրօֆէսէօր Լուի Լըժէի, և թարգմանչին միջեւ եղած թղթակցութիւնը այս գրքի հայերէն թարգմանութեանն առթիւ։

Հեղինակը չատ իրաւամբ կը գրէ իր յառաջաբանի վերջ թէ «Զարմանք պիտի պատճառէ լինէ երէ ընթերցողներ հետաքրքրութիւնը չգրժի պետական մարդ դարձած մի դիւզացիի այս վաւերական պատմութեան վերայ։»

Գինն է փոստի ծախքով մէկտեղ 1 ֆրանգ և 40 սանթիմ։

Ցարածելու համար մեծ քանակութեամբ առնողներուն 25 % զեղչ կը լինի։

(Պարսկաստանի Հայերուն համար 1 ֆրանգ է։)

ԻՄ ՀԱՅՐԱՍՊԱՆ ԸՆԿԵՐԸ

(Կ. ՊՕԼՍՈՑ ՀԱՑՈՑ ԿԵԱՆՔԷՆ ԱՌՆՈՒԱԾ ՄԻ ԻՐԱԿԱՆ ՎԷՊ)

ԳՐՅՈՑ ԱԶԳԱՅԱՐՈՒԹ

Այս հետաքրքրաշարժ գրուած կը ներկայացունէ ընտանեկան տխուր պատկերներէ մին ուր կը տեսնուի թէ անբարոյական մի հայր իւր ապականուած վարքուբարքով որչա՛փ չարիքներ պատճառ դարձած է և վերջ ի վերջոյ ինք ալ իւր որդու ձեռքով սպաննուած և անհետացած է աչխարհէն։ Գինն 1 ֆրանգ, (75 սանթիմ)։

Լոյս տեսաւ
ՐԱՖՖԻ
ՍԱՄՈՒԷԼ
պատմական վէպը
Ա. Բ. Գ. Գիրք
Հեղինակի վերջին պատկերով
Գինն է 7 շիլինգ

Իսկ «Դաւիթ-Բէկ» Հատոր Ա, Բ և Գ վերջաբանով և «կայծեր» Հատոր Բ. շիւակատար, լոյս պիտի տեսնեն ներկայ տարուայ ընթացքում, որոնց բաժանորդագրութիւնը չարունակւում է. երկու գրքի միասին բաժանորդագինն է՝ 10 շիլինգ. իսկ լոյս տեսնելուց յետոյ կարժենան 14 շիլինգ։

Յանկացողները թէ՛ Սամուէլի և թէ՛ Րաֆֆիի միւս երկերի համար, կարող են դիմել այս հասցէին

Mme Raffi
270, Uxbridge Road.
Shepherd's Bush,
London W.

ՏՆՕՐԻՆ—ԽՄԲԱԳԻՐ
Ս. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

ՄԱՐՍԷԼ
Հայերէն տպարան Ս. Փորթուգալեանի
Le Gérant : François CARRIERE
Marseille. — Imprimerie et Papeterie du Midi
Quai du Canal, 9